

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 2 Դեկտեմբեր.– Տօն Ամենայն Սրբոց, հնոց և նորոց, յայտից և անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 3 Դեկտեմբեր.– ԺԱ. Կիրակի զկնի խաչի, Բարեկենդան Յիսնակի պահոց: Ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ հայկական բաժնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր.– Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով իջան Գեթսեմանիի պարտէզը ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց և քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ. բարերար Կիւլլապի Կիւլպէնկեանի և իր զերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար:

Շաբաթ, 9 Դեկտեմբեր.– Սրբոյն Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 10 Դեկտեմբեր.– Ա. Կիրակի Յիսնակի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Ուրբաթ, 15 Դեկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան

Արք. Դարիպեան:

Շաբաթ, 16 Դեկտեմբեր.– Սրբոց Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի և Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Ժամարարն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Կիրակի, 17 Դեկտեմբեր.– Բ. Կիրակի Յիսնակի: Ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր.– Ս. Կոյսի Յղութեան տօնի նախատօնակին հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Ուրբաթ, 22 Դեկտեմբեր.– Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով իջան Գեթսեմանիի պարտէզը ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց և քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շաբաթ, 23 Դեկտեմբեր.– Սրբոյն Նիկողայոսի՝ Միւռայ Սքանչելագործ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մինասայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 24 Դեկտեմբեր.– Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Օրուան Ս. Պատարագը մատուց և քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 29 Դեկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Շաբաթ, 30 Դեկտեմբեր.- Սրբոցն Յակոբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 31 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնակի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ հայկական բաժնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 5 Յունուար.- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Աթոռոյ «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

Շաբաթ, 6 Յունուար.- Սրբոցն՝ Դաւթի Մարգարէին և Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Նրուսաղէմի):

Հստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառ և եմփփորոն զգեցած, «Փառք ի բարձունս»-ին բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը, և ընդունեց Միաբանութեան և դպիրներուն շնորհաւորութիւնները:

Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Լուսարարապետ Սրբազանը: «Հայր Մեր»-էն առաջ Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

Կիրակի, 7 Յունուար.- Ե. Կիրակի Յիսնակի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան

հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Օրուան Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան և Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Երկուշաբթի, 8 Յունուար.- Սրբոյն Ստեփանոսի Նախասարկաւագին և Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս բարեշնորհ վեց սարկաւագներ և հինգ ուրարակիրներ՝ առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներու, մարգարտազարդ սաղաւարտներով և տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մտատիպարին: Արարողութեան նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Կէսօրէ ետք, գլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 9 Յունուար.- Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի և Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Չորեքշաբթի, 10 Յունուար.- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը Տնօրէն Ժողովի անդամներու ուղեկցութեամբ և «Հրաշափառ»-ով մուտք գործեց Մայր Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր նախատօնակին նախագահելէ ետք Ս. Աթոռոյ՝ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Հինգշաբթի, 11 Յունուար.- Տօն Սրբոց Որդւոց Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Առընթերակալ

վարդապետներն էին Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան և Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան: Բուրվառակիր հայրերն էին Տ. Ներսէ՛հ Աբղ. Ալոյեան և Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Պատարագէն ետք Պատրիարք Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս թափօրին: Ապա Միաբանութիւնը և ժողովուրդը թափօրով Ս. Աթոռոյ «Որ էնն յեռթեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատըրիարք Սրբազան Հայրը, օրհնուած նըշխար բաժնեց բոլորին, փակելով շարքը Աւագ Տօներուն:

Շաբաթ, 13 Յունուար.– Սրբոցն Բարսղի Հայրապետին և եղբօր նորա Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ Հայրապետին և Աբբա Եփրեմի Խոռոին Ասորւոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 14 Յունուար.– Կաղանդ: Նոր Տարի (Ըստ Հին Տոմարի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ժամօրհնող Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան: Ապա Միաբանութիւնը և ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան՝ երգելով Ս. Աթոռոյ Մաղթերգը: Նորին Ամենապատուութիւնը շնորհաւորեց բոլոր ներկաները Նոր Տարուան առիթով և ըստ սովորութեան, նարինջ բաժնեց ամենուն:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը և քարոզիչն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Հինգշաբթի, 18 Յունուար.– Ծրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 9:30-ին ընդհանուր ոստիկանապետը, Երուսաղէմի ոստիկանապետը և Հին Քաղաքի պատասխանատու ոստիկաններ Պատրիարք Սրբազանին այցելեցին Ս. Ծնունդը շնորհաւորելու և դէպի Բեթղեհէմ թափօրին հսկողութիւնն ապահովելու:

Ժամը 9:45-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ծամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Պատրիարք Սրբազանը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի և Պէյթ-

Ճալայի քաղաքապետները և պետական ներկայացուցիչները: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազանը և Միաբանութեան անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով Բեթղեհէմի քաղաքապետէն և պաշտօնատարներէն «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայոց Վանքը:

Յետ միջօրէի ժամը 2-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւիթէն դէպի Ս. Ծննդեան Տաճարի Ս. Այրը: Ծրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուց և քարոզեց Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: Ապա Պատրիարք Սրբազանը նախագահեց Ծննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով և երգեցողութեամբ Սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան և երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Ուրբաթ, 19 Յունուար.– Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան: Կէս գիշերէն առաջ ժամը 10-ին սկսուած գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Ծննդեան Այր, ուր կը շարունակուի «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչներ ներկայ եղան, և աւարտին, Պատըրիարք Սրբազան Հօր Ս. Ծննդեան հայերէն և արաբերէն պատգամներէն յետոյ մեկնեցան՝ շնորհաւորելով Պատրիարք Սրբազան Հայրը: Պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ:

Երկրորդ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուց Ս. Էջմիածնի միաբաններէն ուխտաւորաբար Երուսաղէմ ժամանած Տ. Արիստակէս Վրդ. Այվազեան: «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ս. Ծննդեան Այրին մէջ պատարագեց Լուսարարապետ Սրբազան Հայրը: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Ծրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ տեսչական

պատարագ մատուցեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանի առջեւ կատարուեցաւ «Ջրօրհնէք»-ի արարողութիւն:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Դեւոնդ Աբղ. Յովհաննիսեան: «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Պարեա Մ. Վրդ. Երէջեան:

Շաբաթ, 20 Յունուար.- Յիշատակ մեռելոց: Ըստ ընկալեալ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Հոգեհանգստեան կարգին հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 21 Յունուար.- Դ. օր Ծննդեան: Պատրիարք Սրբազան Հօրնախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւազներ, ժառանգաւոր սաներ և հաւատացեալ հայորդիներ, ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնէք» արարողութիւն:

Հինգշաբթի, 25 Յունուար.- Կէսօրէ ետք, նախատօնակին նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 26 Յունուար.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց և քարոզեց Տ. Պարեա Մ. Վրդ. Երէջեան:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճ: Պատրիարք Սրբազանը նախագահեց «Տնօրհնէք»-ի արարողութեան և նարինջ բաժնեց ներկաներուն: Ապա Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ վարդապետաց սեղանատուն իջաւ Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, ուր կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, և տեղի ունեցաւ Միաբանական ճաշ աւանդական «հարիսայով»:

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 27 Յունուար.- Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիրակի, 28 Յունուար.- Բարեկենդան Առաջաւորի պահոց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ հայկական բաժնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատարան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Ուրբաթ, 2 Փետրուար.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 3 Փետրուար.- Ս. Սարգսի Զօրավարին և որդւոյ նորա մարտիրոսին և չորեքտասան զինուորացին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատարան մէջ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազապեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ ազգային բարերարներու՝ Գալուստու Սարգիս Կիւլպէնկեաններու և համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն համար:

Կիրակի, 4 Փետրուար.- Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Շաբաթ, 10 Փետրուար.- Սրբոյն Իսահակայ Պարթեւ Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 11 Փետրուար.- Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ հայկական բաժնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատարան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Չորեքշաբթի, 14 Փետրուար.- Նա-

խատոնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 15 Փետրուար.– Ս. Վարդանանց Զօրավարացն մերոց (1036 վկայիցն): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ ըստ սովորութեան պատարագեց և քարոզեց ժառանգաւորաց վարժարանի և Հնծայարանի տեսուչ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան: «Հայր Մեր»-էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»-ին:

Ուրբաթ, 16 Փետրուար.– Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ասորւոց վանք: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 17 Փետրուար.– Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն Հարիւր Յիսուն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները և գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 18 Փետրուար.– Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Ուրբաթ, 23 Փետրուար.– Նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Շաբաթ, 24 Փետրուար.– Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Խաղ Վրդ. Զունտուրեան:

Կիրակի, 25 Փետրուար.– Բ. Քառասնորդաց. Արտաքսման Կիրակի: Առաւօտեան ժամը 5:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային և Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: Միաբանութեան երկրորդ պաշտօնական մուտքը կատարուեցաւ գլխաւորութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր: Ապա վերնամատրան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մեծահանդէս եռադարձ թափօր Քրիստոսի Գերեզմանին և մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Երկուշաբթի, 26 Փետրուար.– Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» և մոմավառութիւն, նախագահութեամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցէ»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 27 Փետրուար.– Տեառնընդառաջ: Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց և քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շաբաթ, 3 Մարտ.– Սրբոյն Կիրղի Երուսաղէմայ հայրապետին և միւս Կիրղի եպիսկոպոսին և մօրն նորա Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորին

Վրդ. Բաղդասարեանը: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, և ծնողացն Կարապետի և Մարիի և Կիրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 4 Մարտ.- Գ. Կիրակի Քառասնորդաց. Անառակին: Ժամերգութիւններն ու Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 10 Մարտ.- Սրբոցն Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին և Հայրապետին մերոյ՝ Յովհաննու Օձնեցւոյն և վարդապետացն մերոց Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիրակի, 11 Մարտ.- Գ. Կիրակի Քառասնորդաց, Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 17 Մարտ.- Սրբոց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիայ կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր գերեզմանի և Գիւտ հաշի այրին, ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 18 Մարտ.- Ե. Կիրակի Քառասնորդաց: Դատաւորաց: Գիշերային և Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր, երկրորդ մուտքէն ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, օրուն Ս. Պատարագը մատուց և քարոզեց Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան: Պատարագէն վերջ Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 23 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 24 Մարտ.- Ս. Գրիգոր Լուսաւորիչ մուտն ի վիրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 25 Մարտ.- Զ. Կիրակի Քառասնորդաց: Դալստեան: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գեղամ Մ. Վրդ. Զաքարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 31 Մարտ.- Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Քշ. 11 Դեկտեմբեր.– Երուսաղեմի Հին քաղաքին մէջ տօնախմբուեցաւ Բրիտանացիներու կողմէ Օսմանեան տիրապետութենէն քաղաքի ազատագրման 100-ամեակը եւ այդ առթիւ զօրավար Ալենպիի մուտքը Երուսաղեմ: Ս. Աթոռոյս կողմէ սոյն արարողութեանց ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեան, Տ. Աղան Աբեղայ Գոգչեան եւ Ժառանգաւորաց Վարժարանի երգչախումբը: Տօնակատարութեան ընթացքին ութ լեզուներով ընթերցեցաւ քաղաքին մէջ ռազմական դրութիւն հաստատելու մասին հռչակագիրը: Տօնակատարութիւնն իր լրումին հասաւ Դաւթի աշտարակէն ներս Ժառանգաւորաց Վարժարանի երգչախումբին ելոյթով: Հանդիսութեան ներկայ էին նաեւ զօրավար Ալենպիի ընտանիքն ու Երուսաղեմի քաղաքապետը:

Եշ. 14 Դեկտեմբեր.– Իսրայէլի եւ Պաղեստինի մէջ նորանշանակ Պապական Նուիրակ՝ Լիապոլտօ Կիրէլի կատարեց իր առաջին մուտքը Սուրբ Յարութեան Տաճար: Եաֆայի դարպասին առջեւ դիմաւորութեան արարողութեան ներկայ էին Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան եւ Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեան: Դարպասէն դէպի Ս. Յարութեան Տաճար թափօրին մասնակցեցան նաեւ Պատրիարքութեան երկու բարապանները, իսկ Տաճարի մուտքին Պապական Նուիրակը դիմաւորուեցաւ Տաճարի՝ Հայ, Յոյն եւ Լատին տեսուչներու կողմէ:

Ուր. 29 Դեկտեմբեր.– Դեկտեմբեր ամսու վերջաւորութեան Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնին առիթով, Երուսաղեմի մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Առաւօտուն Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապատկեամբ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, շնորհաւորելու գացին Սուրբ Երկրի Քիւսթոտ՝ Հ. Ֆրանսեսկո Փաթթոնի եւ Ֆրանչիսկեան Միաբանութան, եւ Լատին Պատրիարքարանի կառավարիչ՝ Գերշ. Տ. Փիերպատիսթա Արք. Փիցաբալայի եւ Միաբանութեան:

Քշ. 8 Յունուար.– Երուսաղեմի Պապական

նոր Նուիրակը, իր պաշտօնը ստանձնելուն առիթով կատարեց իր առաջին այցը Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Գշ. 9 Յունուար.– Առաւօտեան ժամը 11:00-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին եւ Միաբանութեան: Իր շնորհաւորական խօսքէն յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը Յունաց Պատրիարքին յանձնեց նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհաւորական նամակը:

Ուր. 12 Յունուար.– Երեկոյեան ժամը 4-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Պատրիարքարան շնորհաւորութեան եկան եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցան Երուսաղեմի Հայ Բարեսիրաց Միութեան անդամ-անդամ-ուհիները:

Շք. 13 Յունուար.– Երեկոյեան ժամը 7-ին, Սուրբ Ծննդեան տօնական հանդիսութեանց սեմին, ընդունուած սովորութեան համաձայն, Ժառանգաւորաց Վարժարանի սաները հանդէս եկան Կաղանդի գեղեցիկ յայտագրով՝ համեմուած գեղեցիկ մեներգերով, խմբերգերով, ասմունքով եւ դաշնակի գեղեցիկ մեղեդիներու նուագակցութեամբ: Ժամանակէն առաջ սրահը արդէն լեցուն էր հանդիսականներով: Պատրիարք Սրբազան Հօր եւ միաբանութեան ժամանումէն յետոյ բացման խօսք ըրաւ Տրց. Աշոտ Ղազարեան՝ բարիգալուստի եւ Նոր Տարուայ շնորհաւորական խօսքեր ուղղելով ներկաներուն: Ժառանգաւոր սաներ ներկայացուցին նաեւ «Զմեռ Պապի իրական պատմութիւնը» թատերախաղը: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարանի տեսուչ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան հրաւիրեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը կատարելու իր շնորհաւորական խօսքն ու փակման աղօթքը:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Տարեմուտի կէս-գիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած մեծ բաղմութիւն կար: Հնչեցին Մայր Տաճարի մեծ

զանգերը, ժառանգաւորաց սաներուն կողմէ «Փառք ի բարձունս» երգով աւետուեցաւ աւանդական Նոր Տարուան մուտքը: Ժառանգաւորաց Վարժարանի Տեսուչ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան շնորհաւորեց ներկաներուն Ամանորը և գալիք Սուրբ Ծնունդը՝ մաղթելով բոլորին քաջառողջ կեանքի երկար օրեր:

ԲՁ. 15 Յունուար.– Երեկոյեան ժամը 4-ին, Նիւ Եորքէն ազգային բարերաններ՝ Տէր և Տիկ. Հրաչ Թուֆայեաններ ուխտաւորաց քսան հոգինոց խումբով այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

ԳՁ. 16 Յունուար.– Առաւօտեան ժամը 10:30-ին, Ամանորի և Սուրբ Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի Քաղաքապետ՝ Տիար Նիր Պարքատ այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Պրն. Քաղաքապետ տեղեկացաւ Պատրիարք Սրբազան Հօր մտահոգութիւններու և ապագայ ծրագիրներու մասին: Պատրիարք Սրբազան Հայր խօսեցաւ Սուրբ Փրկչի գմբէթի նորոգութեան, Սուրբ Յակոբի գմբէթի նորոգութեան, Կարապետ Եպիսկոպոսի արտին վրայ յարկաբաժին կառուցելու, Փիլիպպոսի աղբիւրի հայկական հողին վրայ բացօթեայ խորան մը կառուցելու, դէպի Ակեղդամա տարին անգամ մը ուխտագնացութիւն կազմակերպելու, Կովերու պարտէզին վրայ պանդոկ կառուցելու և ժառանգաւորաց Վարժարանին առջեւ գտնուող կայանատեղիին մէջ Պատրիարքութեանս երկու ինքնաշարժեր կեցնելու մասին հարցեր:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, Սուրբ Ծննդեան տօներու առիթով Կ. Պոլիսէն 25 ուխտաւորներ այցելեցին Պատրիարքարան և ստացան Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

ԳՁ. 17 Յունուար.– Երեկոյեան ժամը 4-ին, Պատրիարքարան այցելեց և Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Արցախի Պաշտպանութեան փոխ-նախարար Պրն. Գարի Սաֆարեան:

Շք. 20 Յունուար.– Մեր Սուրբ Ծննդեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կէսօր, յաջորդաբար Պատրիարքա-

րան շնորհաւորելու եկան Ֆրանչիսկեան Միաբանութիւնը՝ Փոխ-Քիւսթոտի գլխաւորութեամբ, Յունաց Ամեն. Սրբազան Պատրիարքը իր միաբաններով, Լատինաց Միաբանութիւնը և Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի և Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր և ներկայացուցիչներ:

Նոյն օրը երեկոյեան Ս. Ուխտիս միաբաններէն Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան Ամերիկայէն ժամանեց Ս. Աթոռ:

Կիր. 21 Յունուար.– Առաւօտեան ժամը 9:00-ին, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեանի, Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեանի, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեանի, Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի և Տ. Ներսէս Արք. Ալոյեանի, առաջին անգամ ըլլալով այցելեցին աշխարհի ամենահին քաղաքի՝ Երիքովի նահանգապետարան և հանդիպում ունեցան նահանգապետ՝ Տիար Մաժիտ Ալ-Ֆիտանիի հետ: Պատրիարք Սրբազան և հոգեւոր հայրեր նահանգապետարանին առջեւ նախ դիմաւորուեցան Երիքովի սպայակոյտին կողմէ և ապա ողջ աշխատակիցներուն հետ ձեռնուելէ ետք հրաւիրուեցան դահլիճ: Իր խօսքին մէջ Երիքովի կառավարիչ՝ Տիար Մաժիդ Ալ-Ֆիտանի, յայտնեց իր ուրախութիւնը Երուսաղէմի Հայ Պատրիարքի առաջին անգամ կատարած այցին համար և յոյս յայտնեց, որ այն շարունակական պիտի ըլլայ: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան ու հիւրասիրութեան համար և ապա յաջորդ տարի դարձեալ տեսնուելու յոյսով հրաժեշտ տուաւ Երիքովի նահանգապետին: Հանդիպման վերջաւորութեան նահանգապետարանին առջեւ Հայոց պատուիրակութիւնը խմբանկարուեցաւ նահանգապետին հետ:

ԲՁ. 12 Փետրուար.– Հայաստանէն Երուսաղէմ ժամանած Ազգային Ժողովի պատուիրակութեան անդամները այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ներկայ էր նաեւ Եգիպտոսի և Իսրայէլի Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Պրն. Արմէն Մելքոնեան: Հանդիպումէն ետք պատուիրակութեան անդամները այցելեցին Սրբոց Յակոբեանց Մայրավանք և Լուսարարապետ Սրբազան

Հօր ուղեկցութեամբ ծանօթացան Հայոց պատկառելի ժառանգութեան:

Նոյն օրը երեկոյեան, Փեթախ-Տիկվայի քաղաքապետ՝ Պրն. Իցիկ Բրաւերման այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Գ2. 13 Փետրուար. Երեկոյեան, նախագահութեամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում Հայաստանէն Երուսաղէմ ժամանած Ազգային ժողովի պատուիրակութեան անդամներու և Երուսաղէմի հայ համայնքի, միաբան հայրերու և ժառանգաւոր սաներու միջեւ: Հանդիպման ընթացքին պատգամաւորները խօսեցան հայ-իսրայէլեան ներկայիս յարաբերութիւններու, իրենց առաքելութեան, այցի նպատակներու մասին և պատասխանեցին ներկաներուն յուզող հարցերուն: Հանդիպումն իր լրումին հասաւ Լուսարարապետ Սրբազան Հօր փակման եւ օրհնութեան խօսքով:

Ուր. 16 Փետրուար. Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Պրն. Արմէն Մելքոնեան, իր պաշտօնավարման շրջանն աւարտելուն առիթով այցելեց Հայոց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Բ2. 19 Փետրուար. Առաւօտուն առաջնորդութեամբ՝ Տ. Թէոդորոս վարդապետ Զաքարեանի և Տ. Գէորգ աբեղայ Հայրապետեանի Պատրիարքութեան ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի սաները ուխտագնացութեաբ գացին Գալիլիական սրբավայրեր:

Ե2. Փետրուար. Ֆրանսայի Tourcoing քաղաքի MUba Eugene Leroy թանգարանին մէջ տեղի ունեցած "Chrétiens d'Orient, 2000 ans d'Histoire" խորագիրն ունեցող ցուցահանդէսին ներկայ գտնուեցաւ դիւանապետ՝ Տ. Կորիւն վարդապետ Բաղդասարեան: Յուշահանդէսին իր մասնակցութիւնը բերած էր նաեւ Ս. Աթոռը՝ ներկայացնելով 14-րդ դարու երկու ձեռագիրներ և Ս. Թէոդորոս եկեղեցւոյ 1798 թ.-ի վարագոյրը: Ֆրանսացիներ անդրադարձ կատարած էին նաեւ Հայոց

Յեղասպանութեանը՝ պատկերներու միջոցաւ ներկաներուն ծանօթացնելով Սուրիոյ եւ Եգիպտոսի մէջ հայերու հաստատումին:

Շբ. 3 Մարտ. Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորական նամակ յղեց Հայաստանի Հանրապետութեան չորրորդ նախագահ՝ Տիար Արմէն Սարգսեանի: Նամակին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով նորընտիր նախագահը՝ կ'ըսէ. «Լիայոյս ենք, որ միջազգային գետնին վրայ Ձեր վաստակած հեղինակութիւնն ու երկար տարիներու դիւանագիտական փորձը պիտի ծառայեցնէք հայրենի մեր երկրի շէնացման, տնտեսութեան զարգացմանն ու ժողովուրդի բարօրութեան: Աներկբայ ենք, որ Ձեր պաշտօնավարման տարիներուն ամէն ճիգ պիտի գործադրէք հայրենիքի խաղաղութեան եւ անվտանգութեան զօրացման ուղղութեամբ»: Նամակի վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հայրը Տէրունակոխ Սուրբ քաղաք Երուսաղէմէն իր օրհնութիւնը կը յղէ Տիար Սարգսեանի և յոյս կը յայտնէ օր մը զինք Սուրբ Երկրին մէջ տեսնելու:

Գ2. 14 Մարտ. Առաւօտեան ժամը 11-ին, Սուրբ Երկրի Աւետարանական եկեղեցւոյ մեծաւոր՝ պատուելի Վովֆկանկ Շմիդտ, ընկերակցութեամբ Ռամալլայի մէջ գտնուող Գերմանիոյ ներկայացուցչութեան գրասենեակի Մշակութեային կցորդի և հնագէտ՝ Պրոֆ. Վիլֆրիդի այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ Ս. Պօղիկոսոսի մատրան մէջ գտնուող խճանկարի նորոգման հարցը:

Գ2. 21 Մարտ. Երուսաղէմի Եբրայական Համալսարանի Հայագիտութեան բաժնի կողմէ առաջին անգամ կազմակերպուած «Հայկական մշակոյթի օրուան» ներկայ գտնուեցան Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Կորիւն վարդապետ Բաղդասարեան, Սրբոց Թարգմանչաց վարժարանի սաներ և սաղիմահայեր: Ծրագրի վերջաւորութեան ցուցադրուեցաւ Ատոմ էկոյեանի «Արարատ» շարժապատկերը:

Ե2. 22 Մարտ. Իսրայէլի և Պաղեստինի մէջ Յոյն Կաթոլիկներու նոր եպիսկոպոս Եսսեր Արքեպս. Այյաշ կատարեց իր առա-

ջին պաշտօնական մուտքը երուսաղէմ: Նաֆայի դարպասին առջեւ Արքեպիսկոպոսը դիմաւորուեցաւ կրօնական համայնքներու ներկայացուցիչներուն կողմէ եւ առաջնորդուեցաւ իրենց Մայր Եկեղեցի, ուր իր նոր պաշտօնի ստանձման առիթով շնորհաւորուեցաւ ներկաներու կողմէ: Դիմաւորութեան արարողութեան ներկայ էին Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան, Աւագ Թարգման՝ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան և Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Քշ. 26 Մարտ. Կէսօրէ ետք ժամը 1-ին, Իսրայէլի Արտաքին Գործոց Նախարարութեան Կրօնից Վարչութեան պետ՝ Տիկ. Շարոն Ռեկեւ, այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան երուսաղէմի քաղաքապետարանի որոշման և Քնեսեթի մէջ շրջանառուող օրինագծի մասին հարցեր, որոնք կը պարտադրէին եկեղեցիներուն և վանքերուն եկեղեցապատկան կալուածքներու համար հարկ վճարել:

